ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հունվարի 15-17-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

   Սերգեյ Շահնազարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հանրային ֆինանսների կառավարման մեթոդաբանության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2018թ. հունվարի 15-17-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

5. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների և հայկական կողմի տրամադրած մեկնաբանությունների քննարկմանն ուղղված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդակցությանը

6. **Քննարկված թեմաները՝**

   ✓ ***«Գնումների մասին» ՀՀ օրենքի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների քննարկում.***

   Հանձնաժողովի համապատասխան ծառայության ներկայացուցիչները հակիրճ ներկայացրեցին օրենքում արձանագրված անհամապատասխանությունները: Հայկական կողմը ներկայացրեց համապատասխան մեկնաբանությունները: Քննարկումների արդյունքում անհամապատասխանությունների գերակշիռ մասը որակվեցին որպես պայմանագրի պահանջների նկատմամբ ֆորմալ (ձևական) կամ բառացի անհամապատասխանություններ:

Արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Հանձնաժողովի համապատասխան ծառայության ներկայացուցիչները հարցերի մեծամասնության մասով ԵԱՏՄ անդամ երկրների ներկայացուցիչների միջև կկազմակերպեն համապատասխան քննարկումներ, որի արդյունքներով Հանձնաժողովը կնախաձեռնի Պայմանագրի փոփոխության գործընթաց:

Միաժամանակ.

- Օրենքով նախատեսված՝ ընտրական գործընթացների կազմակերպման նպատակով իրականացվող գնումների կատարման առանձնահատկությունների մասով պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ հայկական կողմը պետք նախաձեռնի կամ Օրենքում կամ Պայմանագրում համապատասխան փոփոխությունների կատարման գործընթաց.
- Պայմանագրով նախատեսված գնումների մասին տեղեկատվության՝ ռուսերեն լեզվով չհրապարակման վերաբերյալ արձանագրված անհամապատասխանության մասով պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ հայկական կողմը Հանձնաժողով կներկայացնի գրություն՝ խնդրի լուծման նպատակով ձեռքբերվող համապատասխան ծրագրային ապահովման գործարկման մասին: Զուգահեռ գնումների ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերում կնախատեսվի պահանջվող տեղեկատվության ռուսերեն լեզվով հրապարակման պարտադիր պահանջ:

7. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հանրային ֆինանսների կառավարման մեթոդաբանության վարչության պետ

8. Ստորագրությունը, ամսաթիվը

22.01.2018թ.